





Բաղէչէն նախ դէպի Խարզան եւ Դիարբէքեր տանող ճանապարհին եւ ապա Բաղէչէն դէպի Սղերք-Բօճտան-Սու ճանապարհով: Այս գրութեան մէջ պիտի փորձեմ տալ այն ամէն մանրամասնութիւններ որոնք ծանօթ են ինձ, նկարագրել զանազան ուղեգիրներու հատորները: Պատ. Հ. Յ. Տաշեան միայն կարող է ամբողջացնել մօտաւոր պատկերը՝ ըստ մասնագրական տեղեկութիւնների: Նոյն իսկ հանդուցեալ Պրոֆ. Մարկվարտ, ամէնէն ստուգապատում եւ հեղինակաւոր հայագէտը՝ Հ. Հիւրշմանէն ի վեր, իր վերջին թանկագին հատորին մէջ<sup>1</sup> կու տայ գլխաւորաբար պատմական տեղեկութիւններ այդ լեռնակոյտի մասին:

7.

Ժամ 3:35ին հասայ մի բարձր սարահարթին տեղաւորուած Լորտնոն 23 տուն զուտ հայաբնակ, դալար մարգերով շրջապատուած մի գեղեցիկ դիւղ, յոյժ համակրելի եւ գլխաւոր մարգերի: Ունին քարաշէն կոկիկ տուներ եւ բարեկեցիկ կեանքի պայմաններ, Տէր Սարգիս ք. Սիւրիթարեան, մի ուսեալ հոգեւորական եւ միակ հովիւր ամբողջ գաւառին, թախանձեց որ իջնեմ, քանզի 1907ին անցած էինք գիւղէն առանց կանգ առնելու:

Այն ժամանակ դեռ նոր սպաննուած էր գիւղին երկտասարդ քահանան Տէր-Աբրահամ՝ Շիկոցի Աշիբէթի պետերին Ալօ Սլէի թողը Ամարէի ձեռքով: Այն ժամանակ գիւղը սուգի մէջ էր եւ ունէր միմիայն 7 տուն բնակիչ. մինչդեռ այժմ սահմանադրութենէն յետոյ վերադարձած էին փախտականներ եւ դեռ պիտի գային ուրիշներ: Իրենք զնած էին իրենց տասանորդը 1300 դրշ. եւ տժգոհութեան ունէ պատճառ չունէին<sup>2</sup>: Նկատած էի որ այս փոքրիկ գիւղը բոլոր գաւառի մէջ կը վայելէր առանձին յարգանք եւ գրեթէ ամէնք անոր մասին կը խօսէին խորհրդաւոր պատկանքով: Հարցուցի քահանային թէ ինչ էր պատճառը եւ թէ ինչպէս պէտք էր բացատրել Լորտնոն անունը: Ինչպէս սովորութիւն է ամենուրեք՝ մարգերի քիչ կը հետաքրքրուին իրենց ամէնօրեայ մերձաւորութեան գտնուող հնութիւններով կամ շահա-

<sup>1</sup> Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien 1930. Առանձնապէս էջ 220-230:  
<sup>2</sup> 1911ի փետրուարին իմ սցեկութենէն 5 ամիս յետոյ, մի հոգային վէճի պատճառով մէկօցի քիւրտները այս գիւղէն սպաննեցին երկու հայեր:

գրգռող առանձնայատկութիւններով. եւ Տէր Սարգիս բացառութիւն չէր կազմեր այդ գրեթէ ընդհանուր կանոնէն: Ինձ պատասխանեց որ գիւղին ծերունիները կը պատմեն, որ քանի մը հարիւր տարի յառաջ, վերելեան կատարը կար մի մեծ վանք եւ գիւղիսկ այժմ աւերակ եւ մացառներով ծածկուած: Այստեղէն մինչեւ լեռան կատարը մօտ հազար մետր անտառածածկ վերելք է: Լորտնոնոյ կեդրոնը կար մի բնական շարունակ, որի բոլորաթիւր ծառերի հովանիին տակ նստած հարց ու փորձ ըրի լեռան կատարի աւերակ վանքի մասին, սակայն ոչ ոք չունէր աւելի ստույգ տեղեկութիւն, քան քահանան: Ճիշդ գիւղին դիմաց՝ հանդիպակաց Մօտկանի շրթային ստորոտը, մօտաւորապէս երկու քիլոմետր հեռու, կը գտնուի Թաղաւանք, 35 տուն զուտ հայաբնակ գիւղ, որ ստացած է նոր կեանք, վերջին երկու տարուան մէջ: Գիւղացիները վերստացած են իրենց հողերի մեծ մասը՝ մինչեւ 1909 բռնադրուուած Խամիկի Բշարի կողմէ:

Հագիւ տասն րոպէ դուրս ելած էի Լորտնոնոյն, սկսայ իջնալ դէպի մի անկախ ժայռուտ եւ խորունկ հեղեղատ, խորտուրտ եւ տաժանելի մի շաւիղ: Դէպի գետը հոսող ջուրը շատ քիչ էր քանակով տարուան այս եղանակին, սակայն գարնան ամիսներին երբ կը հայի Խոյթ-Տարօն բաժանող լեռան ձիւնը, նա կը դառնայ մի յորդահոսան հեղեղ լեռան կողքերէն յաճախ դէպի հեղեղատը քշելով ժայռեր, ծառերի արմատներ եւ հողի շերտեր: Նախ մեզմ եւ ապա խորացող վայրէջք դէպի հեղեղատ, մօտ 40 մետր է յատակը՝ ուր կը հոսի ջուրը, փխրուն գայլախաղի մի անապատ է, երբեմն խճողուած կարծր ժայռի բեկորներով եւ ծառի արմատներով: Վերելքը աւելի մեղմ եւ դիւրին է եւ գրեթէ անփոփոխ կը բարձրանայ աստիճանաբար դէպի Բռնաշէն գաւառը: Աջ թեւիս անվերջ վայրի ծառաստաններ եւ մացառներ են եւ պատահաբար հանդիպեցայ կիսափուլ գոմերի՝ հովտին խորքը գետի ափերին:

Ոչ ոք չկարողացաւ որոշապէս ըսել թէ ո՞րտեղ կը վերջանայ Խոյթ եւ ո՞ւր կը սկսի Բռնաշէն: Եկայ այն եզրակացութեան որ վերել նկարագրուած հեղեղատը կը կազմէ մի բնական սահման երկու գաւառների մէջ, որով ժամ 5էն մի քիչ առաջ երբ Գցօնք հա-

սայ, այդ արդէն Բռնաշէնի գաւառն էր: Կարելի է ըսել որ Գցօնք մօտաւորապէս 100 մետր աւելի բարձր է քան Լորտնոն, թէեւ վերելքը եղած էր համեմատաբար անգալի:

Նկատելի է որ ինչ չափով որ կը մօտենամ Ս. Աղբերիկի վանքին, այն չափով գիւղերը զուտ հայկական են եւ մեկնելի հայկ. լեզուաբանութեամբ. ի բաց առեալ անոնք որ ատանձին անուններ են: Իսկ դաշտանկարը կը ստանայ աւելի համաչափ եւ հանդարտ մակերես, մինչեւ վանքի հակայական լեռը, որ արդէն հայկական Տաւրոսն էր, թէեւ բնիկ ժողովուրդը այդպիսի մի անուն չի ճանաչեր եւ լսած է մի միայն ուսեալներէ, ճիշդ ինչ-պէս մեր դասական մատենագիրները երբեք մասին վերջէն:

Գցօնք կամ Գեցօնք (Kedzonk) ճիշդ վանքի լեռան ստորոտը, 18 տնուոր զուտ հայաբնակ գիւղ՝ որ կը ծառայէ նաեւ իբրեւ մի տեսակ ձմեռանային ախոռ վանքի անասունների համար:

Այս գիւղին հովիտը կը ստանայ մի գրաւիչ տեսարան: Հանդիպակաց Մօտկանի լեռնարդէն որոշապէս առած է հարաւ արեւելեան ուղղութիւն: Մի լայնատեսք եւ բաց բարձրաւանդակի վրայ Խոյթի գետը բաժնուած է զանազան առուակներով՝ անջատուած գոլգոհեռ աւաղաթումբերով: Գիւղին տեսանելի 4 կամ 5 առուակներ լւարաքանչիւրի եղբայրներին կը բարձրանան նուրբ եւ գեղուղէշ կաղամախի Տորոսի ծառեր: Գետը այստեղ կը հանդիպի Տորոսի կարծր ժայռին, յեղակարծօրէն կը դառնայ դէպի հարաւ եւ ոլորտպտոյտ շրջան դուրս եւ ձեւով Բռնաշէնի արեւելեան Մասունի եւ Մօտկանի ստորին հովիտները մէջ, կը թափի Մօտկանի-Սու, ինչպէս յիշեցի վերել եւ վերջապէս կը հասնի ի Բօճտան-Սու, հին հայկական՝ Սերիթթը եւ յոյն դասականների Κεντοίτης:

Գցօնքի նմանութեամբ մի հարազատ պատկեր կարելի է գտնել Պրոֆ. Լէյման-Հաուպտի<sup>3</sup> հատորին մէջ: Այս գիւղը կենդանի վերարտադրութիւնն է վանի յիշեալ փողոցին եւ կամ հակադարձաբար: Գրեթէ նոյնատիպ պատկեր կը ներկայացնեն Երասիկ

<sup>3</sup> Armenien einst und jetzt, 1926, II, էջ 12: Լուսանկարը ստորագրեալ է այսպէս՝ Häuser-ruinen in einer Straße der Gartenstadt Van.

ափին՝ Սեղրիի շրջակայքը եւ Սրտածորի վանքը՝ Կարնոյ դաշտին մէջ:

Առաւօտեան ժամը 7էն ի վեր ճանապարհին էինք. մարդերէ աւելի յոգնած էին խեղճ անասունները: Երկու ջորեպանները Մշեցի թիւրքեր, կը գանդատէին որ ուշ էր, յոգնած էին անասունները եւ թէ չէին կարող բարձրանալ հսկայ լեռը: Հրամայեցի կէս ժամ հանգիստ. վճռած էի այդ գիւղերը իջեանիլ Ս. Աղբերիկի վանքը: Մղսի Յակոբ Գցօնքի գիւղապետը եւ վանքի տնտեսներից մէկը, մի առոյգ ծերունի, խնդրեց գիւղեր մնալ գիւղ եւ սպաննել արջ: Տարուան այս եղանակին մասնաւորապէս, արջեր մի կատարեալ պատուհաս են բոլոր հունձքերին: Աղուէնները նուազ չարագոյն են: Մայրամուտէն յետոյ եւ երբեմն ալ օր ցերեկով, արջեր կը կազմաերպեն կատարեալ արշաւանք դէպի արտեր, կերպեն կատարեալ արշաւանք դէպի արտեր, ուտելու եւ փճացնելու կորեկն ու գըլգըլը, ինչպէս նաեւ թարմ ու դալար խոտը: Հայաստանի մէջ աշնանային երկրորդ խոտկառքը աստանի մէջ աշնանային երկրորդ խոտկառքը անի տնտեսական մեծ նշանակութիւն՝ կերի սննդի տնտեսական մեծ նշանակութիւն: Արջեր շատ ձմեռանային պաշարի տեսակէտէն: Արջեր կը սիրեն դալար խոտ, եւ յաճախ ուտելի աւելի կը կոխկորտեն, կը թաւային կանանչին մէջ եւ այդ կերպով կը փճացնեն զայն: Բառեկ զարգաքի անմիջական յրմակայքն իսկ արդէն յաճախ կը տարածէին ահուսարսափ: Ջեր յաճախ կը տարածէին անուսարսափ: 1909ի Հոկտ.ին մի հսկայ սեւ արջ սպաննեցի Մորկորի գիւղին մէջ՝ Բաղէչէն մի ժամ հաւաքաբար: Կը գործածէի պայթուցիկ դնդակ (անգլ. դրամ-դրամ) որ անասունին հանդիպելուն պէս կը տապալէր զայն: Մղսի Յակոբ բաւ որ գրեթէ ամէն գիւղեր կու Յակոբ բաւ որ գրեթէ ամէն գիւղեր կային մի երամակ արջեր, կը փճացնէին գիւղին հունձքը եւ վանքին խոտը: Ի հարկէ իրենք ունէին դէնք եւ լաւ նշանաձիգներ էին, ինչպէս կը պատմէ Թովմաս Արծրունին այս գրութեան գլուխը դեռեւորած հատուածին մէջ: Սակայն հին տեսակէ էին իրենց դէնքերը եւ քիչ կը գորէին մի երամակ արջերի գէմ: Յաճախ կը սպաննէին կամ կը վերաւտուէին մի քանի հատ, բայց անհնարին էր վերջ տալ պատուհասին:

Ձգալով որ անկարելի էր ինձ գիւղերի գիւղը, պատուական ծերունին առաջարկեց մեզ միանալ դէպի վանքը: Փորձը ապակեց ուր այդ մօտ 75ամեայ հայ մարդը ցուցեց որ այդ մօտ 75ամեայ հայ մարդը անէ կերպով եւ չմնաց եղականորէն տաժա-

